ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Թագավորի մինն ուներ իրեք տղա։ Օրին մի օր թագավորն ասավ.— Մեր տները հնացել են, բերեք նորոգենք։ Տղեքը քանդեցին նորոգելու։ Նորոգեցին պրծան։
Թագավորն էլիգը թոփ արավ. «Լավն եք շինել»։
Պառավի մինն էկավ ասավ.— Թագավոր, լավն եք շինել, ամա մի բանը պակաս ա։
Պառավը որ ասավ թե. «Մի բանը պակաս ա», թագավորը էդ տները քանդել տվուց ու մին էլ շինել տվուց ուրիշ տեսակ, ընտուց ավելի լավը։
Տները շինել տվուց էլիգը հավաքեց, հարցրուց, հվանեցին։ Ամա էլի էն պառավն էկավ ասավ.— Շատ լավն ես շինել տվել, ամա մի բանը պակաս ա։
Թագավորն էլի մին էլ քանդիլ տվուց, ասավ.— Եր որ պակաս ա, մին էլ քանդեցեք ու ընթավուր շինեցեք, որ պակասություն չունենա։
Թագավորը վրա իրեք անգամ տները թազա շինիլ տվուց՝ մարմար քարերով ամեն մասալեն տեղը, մի արմանալու ու զարմանալու տուն։ Էլի աշխարքը թոփ էլավ շատ հըվանեց։
Պառավն էկավ ասավ.— Թագավորն ապրած կենա, էլի մի բանը պակաս ա։ Իմ ասածի միտքը լավ չեք հըսկանում։ Մի՞թե աղաքի շինածը գեշ էր, մի՞թե եդինը լավ չէր։ Շինիլ ես ընթավուր լավ, երևելի տներ, ամա ես սրան մի կապեկի ոնչ կըտամ, ոնչ կառնեմ։ Սրա միջին Հազարան Բլբուլը պետք ա ըլի, որ հազարտեսակ ծլվլա ու երգի, խաղ ասի, խոսա, որ քեֆին քեֆ չհասնի։
Թագավորն ըռավոտը իր նազիրվեզիրին մոտ տրավ ասավ, որ՝ գնացեք Հազարան Բլբուլը բերեք։
Հմի դուն էն քավթառին ասա, թե քու ընչին ա պետքը, որ խալխին ցավի մեջ ես գցում։
Նազիր-վեզիրն ասին.— Թագավորն ապրած կենա, մենք ոնչ Հազարան Բլբուլը լսել ենք, ոնչ էլ կարանք գնանք բերենք։
Իսկ իր իրեք տղեքն ասին, թե.— Մենք կերթանք Հազարան Բլբուլը կբերենք։
Տղեքը ճամպա ընկան։ Շատ գնացին՝ չի գնացին, շատն ու քիչը աստոծ ա գիտում, գնացին մի բազմանչու ռաստ էկան։ Էդ բաղի կըշտիցը իրեք ճամպա ա գնում։
Բաղմանչուն հարցրին, թե էս ճամպեն դվո՞րն ա տանում։
Ասավ.— Մինը, ասենք, գնում ա Բաքի, մինն էլ գնում ա Շաքի, էս ներքի ճամպեն էլ Գեդան Գյալմազն ա։
Պուճուր ախպերը կարգադրեց, որ մենձ ախպերը վերի ճամպով գնա, միջնեկ ախպերը՝ միջի ճամպով, իսկ ինքը ներքի ճամպեն ընտրեց։
Ախպորտանցն ասավ.— Ախպերտինք, գնում եք, ամա որդ որ թեզ գաք, ըստի՝ էս բաղմանչու կշտին ճամպա պըհեցեք, որ իրեքս էլ, եբ եդ գանք, միատեղ վեր կենանք, եդ գնանք մեր տունը։
Ըստի բաժանվեցին՝ ամեն մինը մի ճամպով գնաց։ Էս մենձ ախպերը գնաց մի քաղաք դուս էլավ, պուճուր ախպերն էլ Գեդան Գյալմազի ճամպեն ընկավ ու գնաց։ Շատ գնաց, եթ քիչ— աստոծ գիդե, գնաց ու ռաստ էկավ մի ծեր մարդու, մի ամարաթի դռան նստած։ Բարով տվուց, անց կացավ։ Ծերունին պատասխան չտվուց։ Էդ տղեն էլ նրա վրա իսկի ուշք չդարձրուց, անց կացավ գնաց։
Ծերունին նոր նրա ետնուց ձեն տվուց.— Ա՛յ տղա, եդ արի։
Թագավորի տղեն եդ էկավ, ասավ.— Էդ որ բերան ունեիր խի՞ չէիր բարովս առնում, խի՞ չէիր հետս խոսում։
Ծերունին հարցրուց.— Էդ ո՞ւր ես գնում։

— Գնում եմ Հազարան-Բլբուլը բերելու։
— Լսե՞լ ես Գեդան Գյալմազի ճամպեն. էս էն ա։ Էկողին ես եմ բաթմիշ անում, Հազարան Բլբուլի պահպանը ես եմ։ Ամա քեզ շատ հըվանեցի, ես քեզ վնասիլ չեմ, այլ կօգնեմ։ Առ էս քիչա-քիվլլահը[1]։ Որ գնաս Հազարան Բլբուլի տիրոջ տունը, նրա պալատը հասնես, էս քիչա-քիվլլահը կդնես գլխիդ, էլ քիզ ոչ ով տենիլ չի։ Տուն կմտնիս, Հազարան Բլբուլը վեր կունես, կբերես, ամա ուրիշ բանի ձեռ չտաս։
Նա գնաց հասավ թագավորի պալատը, քիչա-քիվլլահը դրեց գլխին, տուն մտավ ու տան մի քնջումը կանգնեց։
Թագավորը էկավ, ծառայողնին էկան, իրիկնահաց բերին, սուփրեն քաշեցին, կերան խմեցին։ Տղա ու աղչիկ խառնին իրար հետ։ Համ տղեքն ին դուլուդ անում, համ աղջկերքը։ Եդո դարավաշնին թագավորին իրան տեղումը քնացրին ու իրանք վեր կացան գնացին։
Խալիսը որ հանդարտեց, էն տղեն տեհավ մի երևելի դամա պատիցը կախ արած, վեր կալավ վրեն կապեց։ (Դամա իմ ասում է... Դե թագավորի դամեն ի՞նչ թավոր կըլեր)։ Եդնա թագավորի ոսկի չիբուխը վեր կալավ, կախեց մեջքի կոնուց, քամարիցը։ Էկավ քնած թագավորի կուշտը, տեհավ քյահրըբարե տերողորմեն կշտին վեր դրած, էն էլ վեր կալավ։ Եդո թագավորի երեսը բաց արավ, տեհավ մի սիրուն օքմին ըստի քնած։ Կռացավ նրա էրկու թուշն էլ պաչեց ու եդնա Հազարան Բլբուլը վեր կալավ ու ճամպա ընկավ։
Եկավ հասավ հլիվորին։
Նրան հարցրեց.— Պատճառն ի՞նչ էր, որ դուն, որ Հազարան Բլբուլի պահապանն ես, էս էլ Գեդան Գյալմազի ճամպեն ա, էս ճամպով էկողը քու ձեռովն ա բաթմիշ էլել, ինձ վնաս չտվիր, դեռ հլա ամեն բան ինձ սովորցրիր։
Հլիվոր ասավ.— Դուն, որ էկար, աներկյուղ բարով տվիր անց կացար, ես բրավուրդ արի, որ դուն սրտոտ տղա ես, իմ քեֆն էկավ, ինձ շատ դուր էկար, ընդուր հըմար էլ քեզ ճամպեն շանս տվի ու ամեն բան քեզ սովորցրի։
Ու էդ տղին հարցուց.— Հո ուրիշ բան վի՞ չկալար։
Տղեն ասավ.— Չէ, մենակ Հազարան Բլբուլն եմ բերել, մին էլ, քու տված քիչա-քիվլլահը։ Առ ախպեր, քու քիչա-քիվլլահը, շատ շնորհակալ եմ, որ դուն ինձ էս մենձ լավութինն արիր։
Ու ծերունու ձեռքը պաչեց, մնաս բարով ասավ, Հազարան Բլբուլը ձեռն առավ ու եբ էկավ հասավ բաղմանչու կուշտը, հարցվեց.— Բաղմանչի քեռի, իմ ախպորտանցի էկող չըլա՞վ։
Ասավ թե.— Չէ։
Ասավ.— Քեռի, էս դամեն քեզ փեշքաշ, սարի կկտրես, վազան մատը կտաս։ Էս Հազարան Բլբուլն էլ կպահես, ես գնում եմ ախպորտանցս գտնելու, մինչի իմ եդ գալը Հազարան Բլբուլը քեզ ըմանաթ։
Ու ինքը միքի ճամպեն բռնեց ու գնաց։ Գնաց հասավ մի քաղաք, տեհավ իր ախպերը մի փալան շըլակին համբալութին ա անում, մի ծանդր ջվալ շըլակին տնքալե, լոքին պոկին անելով տանում ա։
Ախպորն ասավ.— Այ տղա, էդ ի՞նչ բան ա. թագավորի խազինեն հըտացրել ես ու համբալություն ես անում, վե գցե էդ ջվալն ու եդևիցս արի։
Ախպորը տարավ թազա չորեր առավ, հագցրեց, ոտ ու գլուխը նորեց։
Որ քաղաքից դուս գալու էղան, ընտտի, քաղքի ղրաղին մի խանութում կերակուր ին ծախում։ Նես մտան, հաց կերան, կշտացան ու դուս գալու վախտը խանութպանին հարցրեց թե՝ ի՞նչ պտենք տալ։

---

[1] Քիչա-քիվլլահ—թաղիքից փափախ՝ թլիսմով շինած—Ծ. Բ.։

— Հինգը մանեթ,— ասավ։
Էդ տղեն քյահրըբարե տերողորմեն տվուց նրան, ասավ.— Էս առ՝ հինգը մանեթի քեզ գրավ, որ փողը բերինք, տերողորմեն եդ կտաս։
Սա էլ առավ տերողորմեն պատից կախ արավ։ Ախպորը վի կալավ էկավ բաղմանչու կուշտը, ասավ.— Էս ախպորս Հազարան Բլբուլի հետ կպահես, մինչի գնամ մեկել ախպորս գտնեմ, բերեմ։
Ու ընկավ վերի ճամպեն, մենձ ախպոր եդնա գնաց։ Գնաց մի քաղաք հասավ, մտավ մեչը, տեհավ՝ իր ախպերը, էրկու էշ ըղաքին փեյինը բարձած գալիս ա։ Գնացել ա մտել մի բաղմանչու նոքար։ Մի դարդակ վերաշոր ունի հագին, էն էլ որ քամին փչում ա, փեշերը եդ տանում, ճռները բացվում են։
Ախպորն ասավ.— Դուն թագավորի մենձ տղեն ըլե՞ս ու էդ օրո՞ւմ։ Բրախի էդ իշանը ու ետևիցս արի..
Ախպորը վե կալավ, թազա շորեր առավ, հագցրուց, տարավ մի հյուրատուն, լավ ուտացրուց, խմացրուց ու հյուրատան տիրոջը հարցրուց.
— Ի՞նչ պտեմ տալ։
— Հինգ մանեթ,— ասավ։
— Առ էս չիբուխը, պատիցը կախ արա, եբ որ քու փողը ղրկեմ, չիբուխս եդ կտաս։
Էն մարդը՝ լավ, ասավ, ու առավ չիբուխը պատիցը կախ արավ։
Մենձ ախպորն էլ առավ, էկավ բաղմանչու կուշտը։ Իրեք ախպերտինք էկան, միավորվեցին Հազարան Բլբուլը վեր կալան ու ճամպա ընկան։ Էկան, շատ էկան, թե քիչ, պստի ախպերը ճամպեն եդ ընկավ։ Էս էրկու ախպերը էկան, մի ջրհորի հասան, խալիչեն գցեցին ֆորի բերանին ու ամեն մինը ծերին նստեց։
Պուճուր ախպերը եդնուց էկավ. շատ բեզարել էր։
Ասին.— Ա՛յ ախպեր ջան, արի, հա արի, նստի դինջացի։
Նա էլ էկավ, մեջտեղը նստեց։ Ախպերտինքը վի կացան թե չէ, պուճուր ախպերը խալիչեն տակին ընկավ ջրֆորը։
Ասին.— Խալիչեն մեզ տու, քեզ էլ ըտտիան կհանինք։
Ասավ.— Որ դուք հանելու իք էլել, ինձ էս ֆորը չիք գցիլ. առեք ձեր խալիչեն, գնացեք ձեր բանին։
Մենձ ախպերտինքն էկան տուն հասան. Հազարան Բլբուլը տվին իրանց հորը, թագավորին։ Հերն էլ առավ Հազարան Բլբուլը, կախ արավ պատից։
Խաբարը տանք պուճուր ախպորից։ Մի բեզրգյան էկավ, էդ ջրհորի գլխին կանգնեց, իրան ճամպեն էր, միշտ ըտտիան ջուր էր վեր ունում։
Ուզաց որ ջուր հանի, տեհավ, որ ըտտի մի իսան կա։
Դուս հանեց, տեհավ մի թագավորի լայիղ շնորհքով տղամարդ, ասավ.— Այ տղա, ըտտի ի՞նչ իր շինում։
— Գիշերը ճամպա ի գալի. մթնագըշեր էր, էկա ու մի ղափիլ ընկա ֆորի մեչը,— ասավ։
Բեզրգյանն ասավ.— Է՛, լա՛վ, որդի, ես զավակ չունիմ, աստծ քեզ հասցրեց, դու կըլես իմ տղեն։
Ու բեզրգյանը նրան իր տղեն շինեց ու տարավ դրուց իր խանութումը, ու էդ տղեն սիրուն սկսեց իր հըմար կարգին առուտուր անել։
Խաբարն ո՞ւմնից տանք. խաբարը տանք Հազարան Բլբուլի տիրոջեն՝ թագավորիցը։
Թագավորը ըռավոտը վե կացավ տեհավ դամեն չկա, չիբուխը չկա, տերողորմեն չկա,

Հազարան Բլբուլը չկա, իրան թշերի ծերն էլ մխկտում ա։ Կանչեց իրան Սինոթին, նազիր-վեզըրին ու ասավ, որ իրան թըլանել են։
Ղոշունը վե կալավ ու ճամպա ընկավ։ Էկավ հասավ ծերի կուշտը ու ասավ.— Էսքան վախտ ա ըստի ես, ինձ պահպանել ես, հմի էս ի՞նչ բան ա, որ ինձ թըլանել ես տալի։
Ծերն ասավ.— Թագավորն ապրած կենա, քու աշխարքի չորս կըռնովը ճամպա կա, բալիմ ուրիշ ճամպով են տարել, ես ի՞նչ իմանամ։ Ես որ էս ճամպեն չըկել օրս ղայիմ պըհել եմ։
Թագավորն իրան ղոշունը վեր կալավ, հասավ բաղմանչուն։
Էկան տեհան բաղմանչին թագավորի ղամեն ձեռին սարի ա կտրում, ծերերն էլ սրում։
Նազիրվեզիրը դրա գլխին, մեչքին վեր հատեցին, մի քանի թրխկացրին ու ասին.— Էս ղամեն քու կշտին ի՞նչ ա շինում, քեզ ո՞վ ա տվել։
— Ախպեր,— ասավ,— ինձի խի՞ էք սպանում. մի տղա բերուց էս ղամեն ինձ տվուց ու ինքը գնաց, ես էլ աղքատ մարդ եմ, ցաքատս կոտրել ա, կացին չունիմ, էս ղամով սարին ի սրում։
Թագավորը հարցրուց թե.— Էն տղեն դվորը գնաց։
Բաղմանչին ասավ.— Էս միջի ճամպովը գնաց։
Թագավորը ղոշունը վե կալավ, էն միջի ճամպեն բռնեց, գնաց հասավ էն քաղաքը, մտավ էն խանութը, որդի որ թագավորի տղեքը հաց ին կերել, տեհավ իր տերոդորմեն ընտի կախ արած։
Հարցրուց.— Դրա ջառըմեն ի՞նչ ա։
Խանութպանն ասավ.— Հինգը մանեթ։
Հանեց հինգը մանեթը տվուց ու տերոդորմեն վի կալավ, եդ եկավ։
Եդ էկավ բաղմանչու կուշտը, հարցրեց.— Էն տղեն, որ եդ եկավ, եդնո դվորը գնաց։
— Էս վերի ճամպով գնաց։
Վերի ճամպով գնացին, հասան էն քաղաքը, քաղքի ղրաղին հաց ուտելու տեղ կար, ուր ղարիբաննին գալիս ին, հաց ուտում։ Մտան էնտեղ հաց ուտելու, տեհան թագավորի չիբուխը ընտի կախ արած։
Թագավորը հարցրեց.— Էս չիբխի ջառըմեն ի՞նչ ա։
— Հինգ մանեթ,— ասաց։
Հանեց հինգ մանեթը տվուց, չիբուխը վի կալավ ու եդ դառավ։
Էկավ բաղմանչու կուշտը, բաղմանչուն հարցրեց թե.— Ի՞նչ էղավ։
Բաղմանչին ճամպեն շանց էրետ։ Թագավորը՝ Հազարան Բլբուլի տերը, իր ղոշունով էկավ, դուս էկավ էն քաղաքը, որտի Հազարան Բլբուլն էր։ Խաբար ղրկեց էն թագավորին. «Ես եմ, Հազարան Բլբուլը ղրգի, յա քաղաքդ տակն ու վրա իմ անում»։
Թագավորը տղերանցը կանչեց, ասավ.— Որդիք, Հազարան Բլբուլի տերն էկել ա, Հազարան Բլբուլն ուզում ա, գնացեք ջուղաբ տվեք։
Տղեքը վե կացան էկան, Հազարան Բլբուլի տիրոջ կուշտը ու ասին.— Հազարան Բլբուլը մենք ենք բերել։
— Ո՞նց եք բերել,— հարցրեց։
Ասին.— Տուն մտանք, վի կալանք բերինք։
Հազարան Բլբուլի տերն ասավ.— Դուք սուտ եք ասում, Հազարան Բլբուլը դուք չեք բերել, գնացեք աչքիցս հեռացեք։
Ասավ ու նրանց վռնդեց։ Թագավորի տղեքը եդ գնացին։
Հազարան Բլբուլի տերը բսպարեց էն թագավորին.— Ղարգի իմ Հազարան Բլբուլը, թե չէ՝ քաղաքդ տակն ու վրա իմ անում։
Խաբարը գնաց բեզրգյանի տղայի կուշտը։

Նա հերացվին ասավ.— Մամի, գնանք տենանք էդ ի՞նչ բան ա։
— Այ որդի՛,— ասավ,— քու ինչիդ ա պետքը, քու բանին կաց։
— Չէ՛,— ասավ,— մամի, բալի ձեռներիցս մի բան ա գալի։
Հերացու ու տղացու գնացին թագավորի կուշտը։
Տղեն ասավ.— Թագավորն ապրած կենա, ինձ ի՞նչ կտաս, որ էդ թագավորին՝ Հազարան Բլբուլի տիրոջը, ըստիան հեռացնեմ։
— Ինչ ուզես կտամ,— ասավ,— թաք նրան ըստիան հեռացնես։
Էդ տղեն էկավ Հազարան Բլբուլի տիրոջ կուշտը ու ասավ.— Թագավորն ապրած կենա, ընչի՞ ես էկել, էս քաղաքավորին լղաճաք անում։ Հազարան Բլբուլ բիրողը մի մարդ կըլի։ Հմի էս սաղ քաղաքն ի՞նչ մեղավոր ա, որ ուզում ես տակնուվրա անես։
Քու Հազարան Բլբուլը ես եմ բերել, ինչ ուզում ես, ինձ արա։
— Ո՞նց բերիր,— հարցրեց Հազարան Բլբուլի տերը։
— Ես Գեդան Գյալմազի ճամպով էկա, տեհա ճամպի ղրաղ մի ամարաթի կշտին մի հըլիվոր մարդ։ Բարով տվի, անց կացա։ Նա ինձ եդ կանչեց հարցուց. «Ո՞ւր ես գնում»։
Գնում եմ, որ Հազարան Բլբուլը բերեմ,— ասի։
Նա ինձ տվուց մի քիչա-քիվլլահ, որ, եբ մտա քու պալատը, գլխիս դրի։ Ըրիգնահացը կերաք, քնեցիք։ Ես մտիկ արի, որ ղամեդ ընտի կախ արած ա։ Ղամեդ վեր կալա, չիբուխդ վեր կալա, տերողորմեդ վեր կալա, երեսդ բաց արի, էրկու թուշդ պագեցի, Հազարան Բլբուլը վեր կալա ու էկա հըլիվորի կուշտը։ Քիչա-քիվլլահը եդ տվի։ Հարցըրուց՝ հո ուրիշ բան վե չկալա՞ր։ Ասի.— Չէ՛, մենակ Հազարան Բլբուլն եմ բերել։ (Մնացած բաներն էլ մեկ-մեկ սամով)։
Հազարան Բլբուլի տերը տեհավ, որ ամեն բան էդ տղեն տեղար-տեղար ասավ.— Հազարան Բլբուլը սա ա բերել,— ասավ. — Էդ ա դուն դրուստ ես ասում, իմ Հազարան Բլբուլի բերողը դուն ես։ Հմի արի ես ու դուն կռիվ անենք, թե դուն կհաղթես՝ Հազարան Բլբուլը քոնն ա, թե ես կհաղթեմ՝ իմ Հազարան Բլբուլը եդ կտանեմ։
Ու կոխ բռնեցին։ Էդ տղեն Հազարան Բլբուլի տիրոջը վեր գցեց ու բգին չոքեց։
Հազարան Բլբուլի տերն ասավ.— Այ տղա, ինձ ձեռ մի տալ, ես աղջիկ եմ, ես ահտ ի արել, ով որ ինձ ախտի, ես նրան ուզեմ։ Հըմի էլ ալամ աշխարքում մենակ դուն իր, որ ինձ ախտեցիր, ըստուց դուն՝ իմն ես, ես՝ քոնը։
Կուռ կռի տվին, գնացին հասան թագավորի պալատը։ Որ տուն մտան, Հազարան Բլբուլը խոսեց։ (Մինչի էդ վախտը Հազարան Բլբուլը մի հետ էլա ձեն չէր հանել)։
Թագավորն ասավ.— Էս ի՞նչ բան ա, Հազարան Բլբուլը խոսաց։
Տղեն ասավ.— Հըլբաթ կխոսա, համ տերն ա ըստի, համ բերողը։ Բերողը ես եմ՝ քո պուճուր տղեն։ Մենձ տղեքդ, որոնց որ ես ամեն լավություն արի, բերին, ինձ ճամպին գցեցին մի ջրֆորի մեջ, ու իրանք Հազարան Բլբուլն առան, էկան։ Բեզրգյան էկավ, ինձ ֆորիցը հանեց, ու ես էլել իմ բեզրգյանի տղա։
Թագավորն էն սըհաթին իր մենձ տղերանցը սուրգուն արավ։
Հազարան Բլբուլի տերը, էն թագավոր աղջիկն ասավ՝ Հազարան Բլբուլի բերողին, թագավորի պուճուր տղին.— Շատ էլ քեզ ուզում եմ, համա ըթենց քեզ ոչինչ չի ըլիլ, ես ահտ ունիմ արած՝ քեզ հետ պսակվիլ չեմ, մինչի որ չգնաս Սինամ թագավորի նաղլը բերես։
Տղեն վեր կացավ ըստիան ու ճամպա ընկավ։ Էկավ հասավ էն ծերունու կուշտը։
Ծերունին հարցրեց.— Էդ ո՞ւր ես գնում։
— Գնում եմ Սինամ թագավորի նաղլը բերեմ, ըտենց ա Հազարան Բլբուլի տիրոնջ, քու նազլու խանումի կամքը։ Ինձ համ շատ հըվանեց, համ գցեց չոլեչոլ։ Ամա ինչ արած, նրա կամքը ինձ հըմա սուրփ ա, ես նրան խելքամաղ էլած սիրում եմ, որ ասիլ էր՝ «Ընգի ջուրը», կընգնեի։ Հմի

էրեսս դպա քեզ արած, մենձ ապի ջան, իմաստուն ծերունի, էլ դու պըտես ինձ ճամպա շանց տալ, թե ոնց պըտեմ Սինամ թագավորի նաղլը բերիլ, ոնց որ Հազարան Բլբուլի բերելու ճամպեն շանց տվիր։
— Գնաս որ էլ,— ասավ ծերունին,— Սինամ թագավորը քեզ նաղլը չի տալ. եբ ժամանակ որ նա իր նաղլը քեզ պատմեց, էն ժամանակ քու գլուխը տալ կտա։ Էլ էս քիչա-քիվլլահը կառնես, կտանես։ Եբ որ նա իր նաղլը քեզ կպատմի, կասի՝ «Այ տղա, իմ նաղլը քու կշտին պտի մնալ. գլուխդ պետք ա տամ», Էն վախտը քիչա-քիվլլահը կդնես գլխիդ ու անհայտ կըլես։ Էլ նա կարալ չի քու գլուխը տալ։
Տղեն վի կացավ, գնաց Սինամ թագավորի կուշտը, դուլլուդչի մտավ։ Մի առժամանակ մնաց նրա կշտին, շատ կացավ, թե քիչ՝ օրին մի օրը ասավ թագավորին. —Թագավորն ապրած կենա, չի՞ կարելի քու նաղըլն ինձ պատմես։
Սինամ թագավորը ջգրվեց.— Դե, շան որդի, դուն ո՞վ ես, մի գյաղին մինը, որ ուզում ես իմ նաղըլն իմանալ։
Տղեն սուս կացավ, մունջ արավ։ Անց կացավ մի քանի օր էլ։ Էդ տղեն սամթը գցեց ու ասավ Սինամ թագավորին.— Սինամ թագավորն ապրած կենա, բեր դուն քու նաղըլն ինձ ասա։
— Ափսոս ես, որ իմ նաղլը քեզ ասեմ, գլուխդ կտամ,— ասավ թագավորը։
— Վնաս չունի, նաղլըդ իմանամ ու էն վախտը գլուխս տուր։
Ու Սինամ թագավորն սկսեց իր նաղլը.— Այ տղա, ես էրկու հատ լավ ձի ունեի, ինչքան լավ պըհիլ ի տալի, ձիանս օրեց-օր խարաբ ին ըլում։ Օրին մի օրը մի թազա մեհտար բռնեցի։ Տեհա, որ դրա ձեռին էլ են ձիանս խարաբ ըլում։ Ասի.— Այ տղա, քու ձեռին էլ են ձիանս խարաբ ըլում, խի՞ չես լավ պըհում. գլուխդ տալ կըտամ։
— Թագավորն ապրած կենա, դուն կարալ չես ինձ սպանել,— պատասխան տվուց ինձ մեհտարը, —արի դուն էս գըշեր իմ տեղը մեհտարություն արա, ես քու տեղը՝ թագավորություն ու էն վախտը կիմանաս, թե բանն ընչումն ա։
Ու բերինք շորերնիս փոխեցինք ես ու մեհտարը. ես դառա մեհտար, նա դառավ թագավոր։ Մեհաարըս՝ էդ թազա թագավորն ինձ ասավ.— Սինամ թագավորն ապրած կենա, կգա կասի թե՝ մեհտար, դուն կասես՝ համմե։
Կասի՝ ձիանը թամքի։ Դուն ձիանը կթամքես, պոչերնին կկապես ու հազիր կկենաս։ Կգա կասի՝ մեհտար, ձիանը բի։ Դուն ձիանը կբերես, օզանգուն կբռնես, նա կնստի։ Դուն էլ մի ձիուն կնստես ու եդնուց կերթաս։ Ու ընտուց եդը ինչ որ տենիս ու իմանաս, մտքումդ դայիմ կպահես Ոնց որ ինձ խրատեց, հընենց էլ արի։ Մինն էկավ, ձիանը թամքիլ տվուց, դուս քաշիլ տվուց, մնին ինքը նստեց, մնին էլ ես, ինքը աղաք ընգավ, ես էլ եդնուց ու քշեցինք։
Ունվարի ամիսն էր, ձինն էլ ճտահար։ Ձիանը քափ ու քրտընքումը մտած, զոռով ձինը ճղում, գնում են։ Շատ գնացինք, թե քիչ, հասանք մի էրի դուռ։
Դա էդ էրի դռանը վեր էկավ, ասավ.— Մեհտար, ձիանը կպըհես մինչի իմ եդ գալը։
Ես Սինամ թագավորս, խեղճ մեհտար դառած, մնացի էրի դռաը կանգնած, ձիանը ձեռիս։ Քրդնած ձիան, երկինքը վըրներուս սառել ա։ Ես էլ ոտիս մինը վեր եմ ունում, մինը դնում։ Մի սրսիկ, մի դողմանիկ ընգել ա ջանս, վըրթվըրթոցն եմ ընգել, սաղ ջանս փշաքաղում ա։ Մի խոսքովս ունվար ամիսը, ձինն էլ կիսահար, ո՞նց կըլեր իմ հալը, էդ դուն իմացի։ Նա տուն մտավ, էդ գնացողը. էրի միջին օխտն ուշաբ կային։ Նրանց հետ կերավ, խմեց, քեֆ արավ։ Քեֆն ավարտելուց ետը, էկավ ինձ ասավ.— Մեհտար, ձիանը բի, նստինք գնանք։ Ձիանը նստեցինք, էկանք թավլի դռանը վեր էկանք։
Ասավ.— Մեհտար, տար ձիանը կապի։ Ու ինքը գնաց։

Ես՝ Սինամ թագավորս, տարա ձիանը կապեցի ու կշտին կացա։ Ռավոտր մեհտարը էկավ ինձ հարցրեց.— Ի՞նչ տեհար, ի՞նչ իմացար։
Ես էլ նաղլն արի թե՝ հալ դազիա, ըսենց ու ըսենց բան պատահեց։
Մեհտարը հարցրեց.— Բա դուն չըհասկացա՞ր ով է գնացողը։
— Բան չի գլխի ընգա,— ասի։
— Էդ քու կնիկն էր, որ ամեն գըշեր քեզ թլիսմա անում ու գնում դևերի հետ իր քեֆն անում ու եդ գալի,— ասավ։ Իմ կնիկը էդ բանն իմացավ, որ էդ գըշեր հետը գնացողը ես իմ էլիլ։ Մի ջադուքյար մեր ուներ, կանչեց ու նրան հայտնեց.— Բա, ասիլ չես, էս գըշեր հետս էկողը մարդս ա էլիլ, հմի ի՞նչ անինք։
Մի թլիսմի ճիպոտ ունեին։ Ինձ կանչեցին, էն ճիպոտով որ տվին, ասին,— Սինամ թագավոր, էշ դառնաս։
Ու ես դառա մի էշ։
Բերին ինձ բեռ բարձեցին, տարան չարսուն ու բերին, շատ վախտ, կժերը տկլոր մեջքիս բարձած, ջուրն ին տանում։ Մի բոպե դնջություն չունեի, դես քշեցին, դեն քշեցին, սոված ծարավ պըհեցին՝ դունչս մորքի վրա կապած։ Ու դառա չոր չոփ, հրաքաթս կտրեց, ես անպետքացա։ Մեչքս էղիր դառավ, աչքերս ճպռոտտցին։ Ինձ ցաց թողին բազումն ըրածելու։ Մեջքս էղիր, ես էլ զոռով քթփթում ի, զոռով ի կարում խոտը պոկեմ։ Ակռավնին գալիս ին, մեջքիս վեր գալի, ինձ կտցահարում։ Ես էլ մխկտալեն գալիս ի, որ տուն մտնիմ, էն անխղճմտանք նոքարնին գլխիս, մեջքիս փետով վեր ին հատում, եդ ածում։ Մեռնիլը լավ էր, քան էդպես կյանքը։
Օրին մի օրը մեր կերակուր եփողն ասավ.— Էս ի՞նչ ա, էս անասունը մեղք ա, մեջքը էղիր, ինքն էլ ճպռոտած, գալիս ա ըստի, զահլա տանում։ Լավն էն ա սպանեցեք, կորչի գնա։
— Ա՛յ տղա, լավ լսի, իմ նաղլն էդ ա։
Կնիկս էկավ, ճիպոտովը ինձ տվուց ու ասավ.— Սինամ թագավորն ես, դառնաս մի կոլունգ։ Ես դառա մի կոլունգ, էլա երկընքի էրեսը, կըռ-կըռ գնացի կոլունգնու թաբունին, շարանին հասա ու նրանց խառնվեցի։ Որդի վեր ին գալի, ընդի իրանցից մնին ղարավուլ ին դնում։ Մի գըշեր էլ հերթն ինձ հասավ, ինձ էլ ղարաուլ դրին։ Բերին մի քար դրին բերնումս, ոտիս մինն էլ բարձրացրին, որ գըշերը քունս տանի ոչ, ղարավուլություն անեմ։ Արի որ քարն էլ բերնիցս վեր գցեցի, ոտս էլ վեր բերի ու նրանցից ծերքին քնեցի։ Թարսի պես էդ գըշերը շահյանը-լաչինը ընկավ մեջներնուս— որդուր թևը կոտրեց, որդուր կռնատակը ծակեց, որդուր աչքը հանեց։ Մենձ դալմաղալ, մենձ կռիվ ընգավ։ Ռավոտն իմացան, որ ղարավուլը ես եմ էլել, ինձ վեր հատեցին, գլխիս տվին մեչքս ծակեցին, ինձ քրքրեցին, բանտ գցեցին։ Ես վի կացա, ղաղա անելով էկա մեր երգիրը, իմ օթևանը։ Իմ բաղում ման իմ գալի, քոռացել իմ։
Մնացել եմ խեղճ, ողորմելի, ոնչ կուտ տվող կա, ոնչ հացի փշրանք տվող կա։ Գալիս եմ հացատան դուռը՝ գլխիս վեր են հատում.
Հացթուխն ասավ.— Էս ի՞նչ ա, էս անասունը, մեխք ու կրակ ա. լավն էնա՝ սատկացնենք, կորչի գնա, քան թե էս ղայդի օր ա քաշում։
Կնիկս էկավ, ճիպոտով տվուց ու ասավ.— Սինամ թագավորն ես, դառնաս շան թուլա։
Ու ես էլա մի շան թուլա։ Շան թուլա իմ դառիլ. ամա քեֆս լավն ա, գնում եմ խոհանոցը մտնում, քսուրպըճուր անում, թիքա են գցում, ոսկոր եմ կրծում, տաք տեղը վեր ընկնում։
Օրին մի օրը ոսկոր ի կրծում, մեր հացթուխն ինձ քացի էրետ։ Հացթուխի ըրեխեն ասավ հորը.— Ապի, դրան քացի տալ մի, դա մեր Սինամ թագավորն ա։
Հացթուխը պելացած, վեր քաշված հարցրուց.— Ոնց թե Սինամ թագավորն ա՞։

— Ա՛յ, էն ղութկումը մի ճիպոտ կա,— ասավ ըրեխեն,— էն ճիպոտով թագավորի կնիկը տալիս ա ու ինչ ասում ա, ընենց է դառնում։
Հացթուխը ղութիկը բաց արավ, ճիպոտը հանեց ու ինձ ճիպտով տվուց ու ասավ.— Սինամ թագավորն ես, դառնաս թագավոր։
Ճիպոտը վեր կալա ու գնացի, զանքալչիս որ տվի, ասի՝ քոթուկ դառնաս,— դառավ էս քոթուկը, որ հրես ըստի ա։ Իմ կընկանն էլ կչեղակ շինեցի, որ հրեն էն ծառի վրեն վեր էկած ա։
— Այ տղա, իմ նաղլն էտ էր, որ քեզ պատմեցի,— ասավ Սինամ թագավորը։
Հմի իմ նաղլն էլ ոչով լպիտի իմանա. էն ա ինչ քեզ ասի։
Հմի պտեմ գլուխդ տալ։
— Լավ, քու կամքն ա,— ասավ նոքար դառած թագավորի տղեն,— մին էդ ճիպտին էլ մտիկ անեմ, թե ինչ զորություն ունի։
Ու վրա պրծավ թագավորի ձեռից ճիպոտն առավ, քիչա-քիվլլահը դրուց գլխին ու աներևութ էլավ։ Սինամ թագավորը մնաց շշկլված կանգնած։ Նա իր նաղլը տանուլ տվուց։ Սինամ թագավորի նաղլը գնաց Հազարան Բլբուլի տիրոնջ կուշտը։
Ու թագավորի տղեն եդ եկավ, քիլա-քիվլլահը էբեր, էրետ հըլիվորին ու ինքը ճիպոտն առավ ու գնաց։ Էկավ հասավ իրանց տուն, իր նշանածի կուշտը։ Սինամ թագավորի կնիկն էլ՝ կչեղակ դառած նրա ետևից գնաց։
Հազարան Բլբուլի տերը հարցրեց Սինամ թագավորի նաղլը բերի՞ր։ Ասավ,— Բերի.
Հազարան Բլբուլ բերողը, նրա սիրուն տիրոջը ըստի հասցնողը Սինամ թագավորի նաղլը ո՞նց չէր բերիլ։
Պատմեց ամեն բան ու ասավ.— Հրեն, էն ծառի վրա Սինամ թագավորի կնիկը կչեղակ դառած, որ ինձ հետ էկավ. եդնիցս կըչկըչալով ու մըղկտալով էկավ մինչի ըստի։
Հազարան Բլբուլի տերը, էն աննման թագուհին ճիպոտը վեր կալավ, կչեղակին խփեց ու ասավ.— Սինամ թագավորի կնիկն ես, էլ եդ դառնաս էն կնիկը։
Նա էլ եդ կնիկ դառավ ու ընկավ քաղքի մեջ (երթար հլբաթ մի բանի կենար)։
— Գնա հին մեղքերդ ապաշխարի։
Ու թագավորի պուճուր տղեն՝ Հազարան Բլբուլ բերողը և իր արմաղան նշանածը, Հազարան Բլբուլի տերը հարսանիք էլան։
Հըլիվոր թագավորը շատ ուրախացավ։ Աշխարքն էլ նրանց հետ ուրախություն քաշեց։ Նորապսակներն էլ գնացին, որ իրենց վայելչությունը քաշեն։ Հազարան Բլբուլն էլ իրան ղայդի սկսեց հազար տեսակ երգել ու ծվծվալ։ Սրա քեֆն ամենից շատ էր բացվել։ Մի բան որ համ տերն էր ըստի, համ բերողը[2]։

[2] Երբ որ Ավետ ապերը «Հազարան բլբուլը» վերջացրեց, «Սինամ թագավորի նաղլն» էլ հետը, Աղասին սկսեց...—Ծ. Բ.։